ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018
02.2018
03.2018
04.2018
05.2018
06.2018
07.2018
08.2018
09.2018
10.2018
11.2018
12.2018
Դեկտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Դեկտեմբեր

թիվ 12 (244)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 2 վարկային կազմակերպության, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 2 վարկային կազմակերպության, 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 207-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 208-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 209-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 211-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 212-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 213-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 214-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 221-Ն որոշումը «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները» կանոնակարգ 6/05-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 256-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 226-Ն որոշումը «2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

37 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցումից հանվել է*** «ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կենտրոն» մասնաճյուղը (որոշում թիվ 1/846Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 վարկային կազմակերպության, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 2050000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/838, 1/839Ա, 1/840Ա), 2 վարկային կազմակերպության, 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/838Ա, 1/839Ա, 1/856Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նվազեցնել վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների առանձնահատկություններից ելնելով հնարավոր ռիսկերը և պաշտպանել այդ ծառայություններից օգտվողների միջոցները, ինչպես նաև ապահովել արդի վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը հանրությանը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 23-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ:»,

2) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2 նորմատիվ) սահմանվում է 100 տոկոս:»,

3) Կանոնակարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը կարող է համալրվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից մեկում բացված բանկային հաշվի (հաշիվների) վրա առկա դրամական միջոցներով:»,

4) Կանոնակարգի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ Ն1, և իրացվելիության՝ Ն2, տնտեսական նորմատիվները հաշվարկվում են ամսական կտրվածքով:»,

5) Կանոնակարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա օրերի թվին) ապահովել սույն կարգի 3-րդ կետով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և սույն կարգի 4-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը:»,

6) Կանոնակարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) չբաշխված շահույթ (չծածկված վնաս): Վճարահաշվարկային կազմակերպության չբաշխված շահույթն ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառվում է վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով, իսկ չծածկված վնասի դեպքում՝ ամբողջությամբ:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀԳՏ N1 (637), 08.01.2019):

7) Կանոնակարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Վճարահաշվարկային կազմակերպության բոլոր բարձր իրացվելի ակտիվների և բոլոր ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (իրացվելիության տնտեսական նորմատիվը) հաշվարկվում է.

$$Ն2 = \frac{Ա_{բի}}{Պ_{ընթ}} \text{ բանաձևով,}$$

որտեղ՝

$Ա_{բի}$ - միջին օրական հաշվարկով բարձր իրացվելի ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$Ա_{բի} = \frac{(Ա_{բի\ 1}+Ա_{բի\ 2}+...+Ա_{բի\ Ն})}{Ն} \text{ բանաձևով,}$$

որտեղ՝

$Ա_{բի\ 1}$, $Ա_{բի\ 2}$, ..., $Ա_{բի\ Ն}$ - վճարահաշվարկային կազմակերպության բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է, իսկ $Պ_{ընթ}$-միջին օրական հաշվարկով ընթացիկ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$Պ_{ընթ} = \frac{(Պ_{ընթ\ 1}+ Պ_{ընթ\ 2}+...+ Պ_{ընթ\ Ն})}{Ն} \text{ բանաձևով,}$$

որտեղ՝

$Պ_{ընթ\ 1}$, $Պ_{ընթ\ 2}$, ..., $Պ_{ընթ\ Ն}$ – վճարահաշվարկային կազմակերպության ընթացիկ պարտավորություններն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է:»,

8) Կանոնակարգի 15-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշվին և/կամ դրամարկղում առկա դրամական միջոցներ, ներառյալ՝ ճանապարհին գտնվող և վճարահաշվարկային կազմակերպության կողմից շահագործվող վճարային տերմինալներում գտնվող դրամական միջոցները, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը: Ընդ որում, բանկային հաշվին և/կամ դրամարկղում առկա դրամական միջոցները ու կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում պետք է կազմեն բարձր իրացվելի ակտիվների ընդհանուր գումարի առնվազն 30 տոկոսը,»,

9) Կանոնակարգի 15-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվներին առկա միջոցներ: Ընդ որում, ոչ ռեզիդենտ բանկը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ
- Մուդիզ՝ «A3» կամ
- Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ
- Ֆիտչ՝ «A-»-ից»:»,

10) Կանոնակարգի 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1 կետով.

«15.1 Եթե ոչ ռեզիդենտ բանկը, վարկային կազմակերպությունը կամ ապահովագրական ընկերությունը (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) ունի միայն մեկ վարկանիշային գործակալության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը: Եթե միևնույն ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունը ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված տարբեր վարկանիշային գործակալությունների կողմից, ապա վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է հիմք ընդունի ամենացածր վարկանիշը: Իսկ միևնույն ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար երեք և ավելի վարկանիշների առկայության դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է հիմք ընդունի երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:»,

11) Կանոնակարգը Գլուխ 8-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ Գլուխ 8.1-ով.

«ԳԼՈՒԽ 8.1 Այլ պահանջներ

49.1. Հաճախորդներից ներգրավված, սակայն շահառուներին կամ վճարման շղթայում ներգրավված այլ մասնագիտացված միջնորդներին (բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն) (այսուհետ՝ Ստացող) դեռևս չվճարված դրամական միջոցները, ինչպես նաև թողարկված էլեկտրոնային փողի դիմաց ներգրավված դրամական միջոցները (այսուհետ՝ ֆինանսական պարտավորություններ) ցանկացած պահի պետք է առանձնացված լինեն վճարահաշվարկային կազմակերպության սեփական

միջոցներից և նշված միջոցները ստացման օրվան հաջորդող օրվանից պետք է պահվեն հատուկ բանկային հաշվին (այսուհետ՝ վճարային հաշիվ):

49.2. Սույն կարգի 49.1-րդ կետում նշված վճարային հաշիվը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ բանկային հաշիվ, և այդ հաշվին առկա դրամական միջոցները՝

1) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել վճարահաշվարկային կազմակերպության այլ պարտավորությունների դիմաց կամ վճարահաշվարկային կազմակերպության սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի.
2) կարող են՝
   ա. օգտագործվել միայն Ստացողներին վճարման նպատակով.
   բ. ներդրվել վստահելի և բարձր իրացվելի ցածր ռիսկայնությամբ՝ սույն կարգի 15-րդ կետով սահմանված ակտիվներում՝ պայմանով, որ ապահովված է սույն կարգի 49.3 կետում նշված պահանջներից մեկը:

49.3. Սույն կարգի 49.1-րդ կետում նշված վճարային հաշվի մնացորդը կարող է փոքր լինել վճարահաշվարկային կազմակերպության՝ նախորդ օրվա դրությամբ ֆինանսական պարտավորությունների մեծությունից միայն այն դեպքում, երբ վճարահաշվարկային կազմակերպության կողմից ֆինանսական պարտավորությունների.

1) չկատարման ռիսկը ապահովագրված է ապահովագրական ընկերության կողմից՝ նվազագույնը նախորդ օրվա դրությամբ ձևավորված ֆինանսական պարտավորությունների և վճարային հաշվի փաստացի մնացորդի տարբերության չափով: Ընդ որում, ապահովագրությունը ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերության միջոցով իրականացնելու դեպքում վերջինս պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝
   - Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ
   - Մուդիզ՝ «A3» կամ
   - Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ
   - Ֆիտչ՝ «A-»-ից,

կամ

2) կատարումը երաշխավորված է բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված երաշխիքով՝ նվազագույնը նախորդ օրվա դրությամբ ձևավորված ֆինանսական պարտավորությունների և վճարային հաշվի փաստացի մնացորդի տարբերության չափով: Ընդ որում, երաշխիք տրամադրած ոչ ռեզիդենտ բանկը կամ վարկային կազմակերպությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝
   - Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ
   - Մուդիզ՝ «A3» կամ
   - Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ
   - Ֆիտչ՝ «A-»-ից»:

49.4. Սույն կարգի 49.3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում.

1) նշված ապահովագրական ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը տվյալ վճարահաշվարկային կազմակերպության հետ չեն կարող հանդիսանալ նույն ֆինանսական խմբի անդամ,
2) սահմանված ապահովագրական ընկերության, երաշխավորի կամ երաշխիք տված անձի կողմից վճարահաշվարկային կազմակերպությանը վճարման ենթակա գումարները կարող են վճարվել բացառապես տվյալ վճարահաշվարկային կազմակերպության համար բացված վճարային հաշվին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 9-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 207-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների կողմից իրականացվող գործառույթների անընդհատությունը և փոխարինելիությունը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի 86-րդ կետի «բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորում ունեցող ժամանակավոր պաշտոնակատարի կողմից:» բառերը փոխարինել «բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի կամ գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորում ունեցող ժամանակավոր պաշտոնակատարի կողմից:» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 208-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով զսպել լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրողների ռիսկերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 43-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 45-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, 221-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի«ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետը «ծառայությունների» բառից հետո լրացնել «(ներառյալ՝ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների)» բառերով,
2) Կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը «թ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» պարբերությամբ.

   «ժ. լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության գործունեության կանոնների նախագծերը ներառում են այս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները:»,
3) Կանոնակարգի 35-րդ կետի 1-ին ենթակետը «զ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» պարբերությամբ.

   «է. լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության կանոնների նախագծերը ներառում են այս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները:»,
4) Կանոնակարգի 45-րդ կետը 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով.

   «6) լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության կանոնների նախագծերը ներառում են այս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

5) Կանոնակարգի 48-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության կանոնների նախագծերը ներառում են այս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները:»,

6) Կանոնակարգի 49-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության ներկայացուցչության գործունեության կանոնների նախագծերը ներառում են այս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները:»,

7) Կանոնակարգի 126-րդ կետի 1-ին ենթակետը «նոր ընդունված գործունեության կանոնները» բառերից հետո լրացնել «(ներառյալ՝ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման կանոնները)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 209-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային ծառայություններ մատուցող անձանց ֆինանսական կայունությունը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 5-րդ կետի.
   ա. 1-ին ենթակետում «տրամադրման ծառայություն,» բառերից հետո լրացնել «(բացառությամբ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված սույն ենթակետում նշված ներդրումային ծառայությունների մատուցման, որի դեպքում ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 60 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ)» բառերը,
   բ. 2-րդ ենթակետում «մեկը» բառից հետո լրացնել «(բացառությամբ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված՝ սույն ենթակետում նշված ներդրումային ծառայությունների մատուցման, որի դեպքում ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 150 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ)» բառերը,
   գ. 3-րդ ենթակետում «կառավարում» բառից հետո լրացնել «(բացառությամբ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված արժեթղթերի փաթեթի կառավարման, որի դեպքում ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 150 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ)» բառերը,
   դ. 4-րդ ենթակետում «անունից» բառից հետո լրացնել «(բացառությամբ իր հաշվին և իր անունից լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների կատարման, որի դեպքում ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամ)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Գործող ներդրումային ընկերությունների համար սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից 6 ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 210-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ներդրողներին որակավորված համարելու չափանիշները համապատասխանեցնել Եվրոպական Միության հրահանգներով և կանոնակարգերով սահմանված չափանիշներին, ինչպես նաև որակավորված ներդրողների գրանցման ընթացակարգը դարձնել առավել արագ և արդյունավետ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06-ը հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Ներդրողներին որակավորված համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի(կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումը տարածվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը որակավորված ներդրողների տեղեկատվական բազայում գրանցված որակավորված ներդրողների վրա՝ 2019 թվականի մարտի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 211-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 211-Ն որոշմամբ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշման

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԱՆՑ՝ ՈՐՊԵՍ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/06

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» պարբերությամբ սահմանված անձանց որակավորված ներդրողներ համարելու չափանիշները, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» և «ե» պարբերությամբ սահմանված որակավորված ներդրողների գրանցման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Օրենք»***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
2) ***«Տեղեկատվական բազա»***՝ Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունները ներառող ցուցակ,
3) ***«Կանոնակարգ 4/07»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07,
4) ***«Որակավորված ներդրող»***՝ Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» և «ե» պարբերություններով սահմանված և սույն կանոնակարգի 6-րդ գլխով նշված չափանիշներին բավարարող այն անձինք, որոնք սույն կանոնակարգով սահմանված կարգով Տեղեկատվական բազայում գրանցվել են որպես որակավորված ներդրող:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Անձը համարվում է Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» և «ե» պարբերություններով սահմանված որակավորված անձ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում սույն կանոնակարգի համաձայն գրանցվելուց հետո:

5. Անձինք որպես որակավորված ներդրող Տեղեկատվական բազայում գրանցվելու համար պետք է համապատասխանեն սույն կանոնակարգի 0-ով սահմանված չափանիշներին:

ԳԼՈՒԽ 4. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ Ի ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Անձը որակավորված ներդրող համարվելու համար գրանցվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով կամ Կանոնակարգ 4/07-ով սահմանված կարգով ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի:

7. Անձը Տեղեկատվական բազայում գրանցումից դուրս գալու համար կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգով կամ Կանոնակարգ 4/07-ով սահմանված կարգով ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի:

8. Ֆիզիկական անձի դեպքում թղթային դիմումը պետք է ստորագրվի տվյալ անձի կամ նրա լիազոր անձի կողմից:

9. Իրավաբանական անձի դեպքում թղթային դիմումը պետք է ստորագրվի գործադիր տնօրենի կամ լիազորված այլ անձի կողմից:

10. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով, եթե սույն կանոնակարգով փաստաթղթերի ներկայացման այլ կարգ սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 5. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերում սահմանված դիմումները ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է անձին Տեղեկատվական բազայում կամ մերժում է անձի գրանցումը կամ հանում է անձին գրանցումից Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետի կողմից ստորագրված գրությամբ:

12. Կենտրոնական բանկը չի գրանցում անձին որպես որակավորված ներդրող, եթե սույն կանոնակարգի հավելված 1-ով սահմանված դիմումը թերի է լրացված:

13. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձի՝ որպես որակավորված ներդրող գրանցման կամ գրանցման մերժման վերաբերյալ համապատասխան գրությունը չստորագրելու դեպքում անձը համարվում է գրանցված որպես որակավորված ներդրող:

14. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձին Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու վերաբերյալ համապատասխան գրությունը չստորագրելու դեպքում անձը համարվում է Տեղեկատվական բազայում գրանցումից հանված:

15. Կենտրոնական բանկը ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից Կանոնակարգ 4/07-ի 14.11-րդ կամ 14.13-րդ կետերի համաձայն Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու մասին համապատասխան դիմում կամ պրոֆեսիոնալ հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման (ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման) վերաբերյալ տեղեկացում ստանալու դեպքում հանում է տվյալ անձին Տեղեկատվական բազայում գրանցումից համապատասխան դիմումը կամ տեղեկացումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Որակավորված ներդրող գրանցվելու, գրանցման մերժման կամ գրանցումից հանելու վերաբերյալ Կենտրոնական բանկը տեղեկացնում է տվյալ անձին վերջինիս կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեի միջոցով համապատասխան դիմումի ներկայացմանը կամ սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված տեղեկացման ստացմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Որպես որակավորված ներդրող գրանցումը ուժի մեջ է մինչև համապատասխան դիմումի ներկայացմանը հաջորդող տարվա հունիսի 30-ը, եթե որակավորված ներդրողը չի դիմել ավելի վաղ ժամկետում իրեն գրանցումից հանելու համար: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող: Այս դեպքում որպես որակավորված ներդրող գրանցումն ուժի մեջ է, քանի դեռ տվյալ ներդրողը հանդիսանում է տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի պրոֆեսիոնալ հաճախորդ կամ մինչև ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ ներկայացված դիմումի հիման վրա Տեղեկատվական բազայում գրանցումից հանելը:

ԳԼՈՒԽ 6. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

18. Որակավորված ներդրող կարող են համարվել այն անձինք, որոնք ներկայացրել են սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված դիմումը և միաժամանակ բավարարում են ստորև ներկայացված պայմաններին.

1) Կանոնակարգ 4/07-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված իրավաբանական անձինք և ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգված 14.1-րդ կետում սահմանված անձինք, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձին Կանոնակարգ 4/07-ի 14.10-րդ կետի համաձայն տվել են իրենց համաձայնությունը որակավորված ներդրող համարվելու վերաբերյալ,
2) այն անձինք, որոնք չեն հանդիսանում որևէ ներդրումային ծառայություններ մատուցող անձի պրոֆեսիոնալ հաճախորդ, սակայն բավարարում են Կանոնակարգ 4/07-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետով, 14.1-րդ կետով (ընդ որում՝ 14.1-րդ կետի 3-րդ ենթակետում սահմանված գիտելիքն անհրաժեշտ է գնահատել արժեթղթերում ներդրումների հետ կապված) կամ Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված չափանիշներին:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձինք ինքնուրույն են գնահատում սույն գլխով սահմանված չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև ինքնուրույն են որոշում կայացնում Տեղեկատվական բազայում որպես որակավորված ներդրող գրանցվելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 7. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

20. Կենտրոնական բանկը վարում է գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազան: Հարցման դեպքում Տեղեկատվական բազայում ներառված տեղեկությունները կարող են տրամադրվել թողարկողներին:

21. Տեղեկատվական բազայում ֆիզիկական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը (հաշվառման վայրը և փաստացի բնակության վայրը), հեռախոսը, հանրային ծառայության համարանիշը (բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը), էլեկտրոնային հասցեն:

22. Տեղեկատվական բազայում իրավաբանական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, հեռախոսը, հարկ վճարողի հաշվառման համարը էլեկտրոնային հասցեն:

23. Տեղեկատվական բազայում գրանցված որակավորված անձի վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող (այս դեպքում փոփոխությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից):

24. Որակավորված անձը պարտավոր է Կենտրոնական բանկին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնց արդյունքում տվյալ անձն այլևս չի բավարարում որակավորված ներդրողների՝ սույն կանոնակարգով սահմանված չափանիշներին: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող (այս դեպքում փոփոխությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից):

25. Կենտրոնական բանկը գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունները ներառում է Տեղեկատվական բազայում համապատասխան տեղեկացումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

26. Կենտրոնական բանկը պատասխանատու է միայն Տեղեկատվական բազայում որակավորված ներդրողներին պատշաճ գրանցելու համար: Կենտրոնական բանկը պատասխանատու չէ որակավորված ներդրողների՝ սույն կանոնակարգի 0-ով սահմանված չափանիշներին համապատասխանության արժանահավատության ստուգման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշման Հավելվածի

ԱՆՋԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

ՄԱՍ Ա*

Կենտրոնական բանկի նախագահին
Հարգելի _____

I. Կանոնակարգ 4/07-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված չափանիշների բավարարման դեպքում

_____ *ը* հավաստիացնում է, որ
(իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
բավարարում է որակավորված ներդրող համարվելու համար ստորև նշված չափանիշներից առնվազն երկուսին, մասնավորապես՝

☐ Դիմումի ներկայացմանը նախորդող տարվա վերջի դրությամբ դիմումատուի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 մլն Հայաստանի Հանրապետության դրամը.

☐ Դիմումի ներկայացմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված դիմումատուի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է 1 մլրդ Հայաստանի Հանրապետության դրամը,

☐ Դիմումի ներկայացման պահին նախորդող ամսվա/ վերջին ամսվան նախորդող ամսվա վերջի դրությամբ (նշվում է համապատասխան ամսվա անունը) դիմումատուի ընդհանուր կապիտալը կազմում է 50 մլն Հայաստանի Հանրապետության դրամը

II. Կանոնակարգ 4/07-ի 14.1-րդ կետով սահմանված չափանիշների բավարարման դեպքում

_____ ը հավաստիացնում է, որ
(անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
բավարարում է որակավորված ներդրող համարվելու համար ստորև նշված չափանիշներից առնվազն երկուսին, մասնավորապես՝

☐ դիմումատուն դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500000 Հայաստանի Հանրապետության դրամ,

☐ դիմումատուի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

☐ դիմումատուն ֆինանսական շուկայում ունի առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ:

III. «Արժեթղթերի շուկայի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «ե» պարբերությամբ սահմանված չափանիշի բավարարման դեպքում

_____ ը հավաստիացնում է, որ
(իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
բավարարում է.

☐ որակավորված ներդրող համարվելու համար «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետ «ե» պարբերությամբ սահմանված չափանիշին:

Հավաստիացնում եմ (ենք), որ տեղյակ եմ (ենք) որպես որակավորված ներդրող գրանցվելու հետևանքներին՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Մասնավորապես, տեղյակ եմ (ենք), որ Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցվելու դեպքում կարող եմ (ենք) զրկվել ներդրողների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից, այդ թվում՝ ինձ (մեզ) արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում բացակայում է ազդագիր հրապարակելու թողարկողի պարտավորությունը, հետևաբար ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում ինձ (մեր) վրա:

Խնդրում եմ (ենք) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ինձ (մեզ) որպես որակավորված ներդրող:

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն, հայրանուն _____

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ _____ ի

(որպես որակավորված անձ գրանցման ենթակա անձի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

անունից Կենտրոնական բանկ ներկայացնել սույն դիմումը՝ նրան որպես որակավորված ներդրող գրանցելու նպատակով (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում):

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունն անհրաժեշտ չէ):

_____

Ամսաթիվ _____

* *Չափանիշին բավարարելու դեպքում համապատասխան ազատ վանդակում կատարվում է «V» նշումը:*

ՄԱՍ Բ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկը տեղադրելու է ՄԱՍ Բ-ում բերված տեղեկատվությունը Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում, որը կարող է տրամադրվել թողարկողներին:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցվելու դեպքում Դուք կարող եք զրկվել ներդրողների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից, այդ թվում՝ Ձեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում թողարկողը պարտավոր չէ ազդագիր հրապարակել, հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում Ձեզ վրա:

Սույն փաստաթղթում նշված հասցեով Ձեզ կուղարկվի գրություն, որով կնշվի, որ Դուք ընդգրկված եք Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում:

Որպես որակավորված ներդրող գրանցումն ուժի մեջ է մինչև դիմումի ներկայացմանը հաջորդող հունիսի 30-ը, եթե դուք չեք դիմել ավելի վաղ ժամկետում գրանցումից հանելու համար: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող: Այս դեպքում Ձեր՝ որպես որակավորված ներդրողի գրանցումն ուժի մեջ է, քանի դեռ դուք հանդիսանում եք տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի պրոֆեսիոնալ հաճախորդ կամ մինչև ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ ներկայացված դիմումի հիման վրա Տեղեկատվական բազայում գրանցումից հանելը:

Դուք պարտավոր եք Կենտրոնական բանկին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնց արդյունքում դուք այլևս չեք բավարարում որակավորված ներդրողների՝ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող (այս դեպքում փոփոխությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից):

Տեղեկատվական բազայում Ձեր վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում Դուք կարող եք դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ: Այս դրույթը չի տարածվում այն որակավորված ներդրողների վրա, որոնք ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ են գրանցվել որպես որակավորված ներդրող (այս դեպքում փոփոխությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից):

Անունը, ազգանունը, հայրանունը/ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը

Դիմումատուի բնակության վայրը (հաշվառման և փաստացի բնակության վայրը) /գտնվելու վայրը

Հեռախոսը (կարող է գրվել ցանկացած փոստային հասցե, որի միջոցով կարելի է անձի հետ կապ հաստատել)

Հանրային ծառայության համարանիշը (բացակայության դեպքում անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը)/Հարկ վճարողի հաշվառման համարը

Էլեկտրոնային հասցեն

Ամսաթիվ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշման Հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի _____

Խնդրում եմ/ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանել

_____

(անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայից:

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն, հայրանուն _____

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ _____

(որակավորված անձի անունը, ազգանունը, հայրանունը
(անվանումը, կազմակերպական-իրավական ձևը))

անունից Կենտրոնական բանկ ներկայացնել սույն դիմումը՝ նրան որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու նպատակով (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում)

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունն անհրաժեշտ չէ:) _____

Ամսաթիվ _____

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով զսպել լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրողների ռիսկերը՝ սահմանափակելով ոչ պրոֆեսիոնալ ներդրողների մուտքն այս շուկա, ինչպես նաև պրոֆեսիոնալ հաճախորդների դասակարգման չափանիշները համապատասխանեցնել Եվրոպական Միության հրահանգներով և կանոնակարգերով ամրագրված մոտեցումներին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը, 61-րդ հոդվածի 1-ին մասը, 65-րդ հոդվածի 3-րդ մասը, 70-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) Կանոնակարգի 1-ին կետը 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-19-րդ ենթակետերով.

«10) «Լևերիջ». գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը փոքր է մեկից:

11) «Ֆորեքս գործարք». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք չհանդիսացող ցանկացած ածանցյալ ֆինանսական գործիք (ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք (գործարք)), որի գինն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է արտարժույթի փոխարժեքից և որը կնքվում է լևերիջով:

12) «Լևերիջով գործարք». ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործարք, որը կնքվում է լևերիջով, այդ թվում՝ ֆորեքս գործարք:

13) «Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին». որևէ անձին ուղղված անհատական բնույթի խորհրդատվություն, առաջարկություն կամ նմանատիպ բնույթի այլ գործողություն կամ ծառայություն (այսուհետ՝ խորհրդատվություն)՝ կապված արժեթղթերով կամ ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման հետ, մասնավորապես՝

ա. խորհրդատվության տրամադրումը որևէ արժեթղթի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ նմանատիպ բնույթի գործարքի վերաբերյալ, կամ

բ. խորհրդատվության տրամադրումը կոնկրետ արժեթղթից կամ ածանցյալ ֆինանսական գործիքներից բխող որևէ իրավունքի իրականացման կամ չիրականացման վերաբերյալ, որը կապված է արժեթղթի գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ նմանատիպ բնույթի գործարքի հետ, կամ

գ. կրթումը, վերապատրաստումը, ուսուցումը, դասընթացը և վերլուծությունների ու այլ տեղեկությունների տրամադրումը լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների վերաբերյալ (բացառությամբ, եթե տվյալ գործողություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գործող հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից), ինչպես նաև տվյալ գործարքների կնքման նպատակով ստեղծված օնլայն առևտրային հարթակների (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, տերմինալների և այլ ծրագրերի) վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

14) «Պրոֆեսիոնալ հաճախորդ». հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար: Պրոֆեսիոնալ հաճախորդներ համարվելու մանրամասն չափանիշները սահմանված են սույն կանոնակարգի 3.1-րդ գլխում:

15) «Կանոնակարգ 4/05». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05:

16) «Կանոնակարգ 4/06». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06:

17) «Գործընկեր». Ներդրումային ծառայություններ մատուցող անձի հետ համագործակցող կազմակերպություն, որի կողմից տրամադրված օնլայն առևտրային հարթակների (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, տերմինալների և այլ ծրագրերի) միջոցով կամ որի հետ կնքվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի հաճախորդների լևերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքները:

18) «Ռեզիդենտ». ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության»:

19) «Ոչ ռեզիդենտ». ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության»:»,

2) Կանոնակարգի 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր վերնագիր.

«ԳԼՈՒԽ 3.1 ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԵՎ ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»,

3) Կանոնակարգի 13-րդ և 14-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը ներդրումային ծառայություններ մատուցող անձը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով: Ընդ որում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք պետք է ունենան հաճախորդների դասակարգման ներքին իրավական ակտերով սահմանված կանոններ՝ դասակարգման պատշաճ գործընթացն ապահովելու համար:

14. Պրոֆեսիոնալ հաճախորդ են համարվում.

1) ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն.
2) Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը.
3) միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը.
4) իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
   ա. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
   բ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված՝ անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

գ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:»,

4) Կանոնակարգը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14.1-14.14-րդ կետերով.

«14.1 Հաճախորդի նախաձեռնությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել սույն կանոնակարգի 14-րդ կետում չնշված այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

1) հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,
2) հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
3) հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:

14.2. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգումը համարվում է վավեր, եթե հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել: Ընդ որում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձն իր ներքին իրավական ակտերով սահմանում է հաճախորդի՝ սույն կետով սահմանված գնահատման ընթացակարգ: Յուրաքանչյուր հաճախորդի ունակության և գիտելիքի գնահատման դեպքում նշված ընթացակարգի հիման վրա կազմվում է գնահատող ղեկավարի (աշխատակցի) կողմից ստորագրված արձանագրություն (փաստաթուղթ), որը ներառում է հաճախորդի գնահատման արդյունքները՝ պատշաճ հիմնավորմամբ:

14.3. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց ղեկավարների և ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց համար Կանոնակարգ 4/05-ով սահմանված որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները կարող են ուղեցույց հանդիսանալ հաճախորդների՝ սույն կանոնակարգի 14.2-րդ կետում նշված գիտելիքների և փորձի գնահատման համար:

14.4. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդների հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ սույն կանոնակարգի 14.1-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը ներդրումային ծառայություններ մատուցող անձն այդ հաճախորդին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ սույն կանոնակարգով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

14.5. Սույն կանոնակարգի 0-րդ կետում սահմանված հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին վերաբերող ծառայության կամ ծառայությունների մասով նախաձեռնել են պրոֆեսիոնալ դասակարգվել, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում ներդրումային ծառայություններ մատուցող անձին այն մասին, որ.

1) համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,
2) տեղյակ են, որ որևէ ծառայության կամ որևէ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

14.6. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդների հետ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ սույն կանոնակարգի 14.1-րդ կետում նշված անձանց՝ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մասով պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը.

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձը հաճախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Ընդ որում՝ լևերիջով գործարքներ, այդ թվում՝ ֆորեքս գործարքներ կնքելու նպատակով օնլայն առևտրային հարթակներին (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերին, տերմինալներին և այլ ծրագրերին) մուտք գործելու հնարավորության տրամադրումը համարվում է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման հետ կապված ներդրումային ծառայություն կամ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
2) տվյալ հաճախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում ներդրումային ծառայություններ մատուցող անձին այն մասին, որ տեղյակ են լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքներին առնչվող ռիսկերի մասին, ընդ որում՝ այս հայտարարությունն անհրաժեշտ է ներկայացնել սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված բովանդակությամբ՝ հաճախորդի ստորագրությամբ:

14.7. Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է հաճախորդի համաձայնությունը՝ նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձի նախաձեռնությամբ, թույլատրվում է պրոֆեսիոնալ համարվող հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

14.8. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը իր և հաճախորդի միջև կնքվող պայմանագրում պարտադիր կերպով ներառում է դրույթ, որի համաձայն նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատելու և կառավարելու ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել ներդրումային ծառայություններ մատուցող անձին՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվելու ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

14.9. Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձը, սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերի համաձայն, ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է ներդրումային ծառայություններից որևէ մեկին, բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:

14.10. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք սույն կանոնակարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելիս կամ սույն կանոնակարգի 14.1-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելիս գրավոր հարցում են կատարում տվյալ հաճախորդներին նաև որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Եթե առկա է հաճախորդի համաձայնությունը, ապա վերջինս ստորագրում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից տրամադրված Կանոնակարգ 4/06-ի Հավելված 1-ով սահմանված որակավորված ներդրող գրանցվելու դիմումը: Ստորագրված դիմումը ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից ներկայացվում է Կենտրոնական բանկ դիմումը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով): Սի-Բի-էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում դիմումը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում ներկայացնում է մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

14.11. Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները, որոնք սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն ստորագրել են որակավորված ներդրող գրանցվելու դիմում, Կանոնակարգ 4/06-ով սահմանված գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից դուրս գալու համար ստորագրում և տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձին են ներկայացնում Կանոնակարգ 4/06-ի հավելված 2-ով սահմանված Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու մասին դիմումը: Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք ստորագրված դիմումը էլեկտրոնային՝ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված կարգով ներկայացնում են Կենտրոնական բանկ անհապաղ, բայց ոչ ուշ, քան պրոֆեսիոնալ հաճախորդի կողմից ստորագրված դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

14.12. Ներդրումային ծառայություն մատուցող անձինք պրոֆեսիոնալ հաճախորդներին դասակարգելիս պարտավոր են այդ հաճախորդի հետ պայմանագրում ներառել դրույթ, համաձայն որի պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները պարտավոր են ներդրումային ծառայություններ մատուցող անձին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ ներդրումային ծառայություններ մատուցող անձին հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա ներդրումային ծառայություններ մատուցող անձի գնահատականով հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարզում է, որ հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, ներդրումային ծառայություններ մատուցող անձն անհապաղ դադարեցնում է հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հաճախորդին:

14.13. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն, իրենց հաճախորդների պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման վերաբերյալ, ինչպես նաև սույն կանոնակարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու վերաբերյալ (միայն այն հաճախորդների մասով, որոնք սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն համաձայնություն են տվել ներդրումային ծառայություններ մատուցող անձին համարվել որակավորված ներդրող) տեղեկացում են ներկայացնում Կենտրոնական բանկ անհապաղ, բայց ոչ ուշ, քան պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցումից (սույն կանոնակարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելուց) հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկացումը ներկայացվում է էլեկտրոնային՝ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված կարգով և ներառում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը, հաճախորդի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը), հաճախորդի հանրային ծառայության համարանիշը, բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը (հարկ վճարողի հաշվառման համարը), պրոֆեսիոնալ հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման ամսաթիվը (սույն կանոնակարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման ամսաթիվը), դադարեցման (պայմանագրի լուծման) հիմքը (հիմքերը):

14.14. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, Կանոնակարգ 4/06-ի 23-րդ կետի համաձայն, իրենց պրոֆեսիոնալ հաճախորդներից ստացված տեղեկությունների փոփոխությունների մասին տեղեկացնում են Կենտրոնական բանկին 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային՝ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված կարգով:»,

5) Կանոնակարգի 38-րդ կետը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-րդ ենթակետով.

«8.1) լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մատուցման պայմանագրի դեպքում լրացվում են նաև.

ա. լևերիջի առավելագույն մեծությունը, դրա փոփոխության պայմանները,

բ. ծառայության կամ գործարքի արդյունքում կորուստների դեպքում փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ տեղեկություններ,

գ. մարժայի և այլ միջոցների փոխանցման կարգը,

դ. գործարքին բնորոշ այլ առանձնահատուկ պայմանները:»,

6) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 16. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

76. Արգելվում է լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդներին:

77. Մինչև լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցելը ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարզում է հաճախորդի ռեզիդենտությունը□

78. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ռեզիդենտ պրոֆեսիոնալ հաճախորդներին կարող են տրամադրել առավելագույնը 1:300 լևերիջ:

79. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ոչ ռեզիդենտ պրոֆեսիոնալ հաճախորդներին կարող են տրամադրել առավելագույնը 1:400 լևերիջ:
80. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված կարող են ծառայություններ մատուցել միայն այն դեպքում, եթե ծառայության շրջանակում ռեզիդենտ հաճախորդի կողմից ներդրվող նվազագույն ապահովվածության գումարը (մարժան) առնվազն 5 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ է:
81. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված կարող են ծառայություններ մատուցել միայն այն դեպքում, եթե ծառայության շրջանակում ոչ ռեզիդենտ հաճախորդի կողմից ներդրվող նվազագույն ապահովվածության գումարը (մարժան) առնվազն 2 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ է:
82. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայություններ մատուցելիս պետք է ապահովեն, որպեսզի հաճախորդի կորուստը չլինի ավելին, քան իր կողմից ներդրված նվազագույն ապահովվածության գումարն (մարժան) է:
83. Հաճախորդներին լևերիջով գործարքների, այդ թվում, ֆորեքս գործարքների կատարման հետ կապված ծառայություններ մատուցելու դեպքում ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործընկեր կարող են լինել այն կազմակերպությունները, որոնք բավարարում են սույն կետով սահմանված չափանիշներից առնվազն երկուսին.
    1) միջազգային լավագույն կարգավորման ստանդարտներին համապատասխանություն (գործընկերոջ կարգավորող մարմինը IOSCO-ի Հավելված Ա-ի անդամ է),
    2) առնվազն 10 տարվա գործունեության պատմության առկայություն,
    3) վարկանիշի առկայություն (առնվազն Մուդիս վարկանշող կազմակերպության տրամադրած Բաա1/Պ-2 վարկանիշ, կամ Ստանդարտ և Փուրզ վարկանշող կազմակերպության տրամադրած ԲԲԲ+/Ա-2 վարկանիշ, կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպության տրամադրած ԲԲԲ+/Ֆ2 վարկանիշ):»,

7) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 1-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թվականի մարտի 31-ը, ներդրումային ծառայություններ մատուցող անձինք իրականացնում են իրենց կողմից արդեն իսկ դասակարգված պրոֆեսիոնալ հաճախորդների վերադասակարգում՝ հաշվի առնելով սույն կանոնակարգով սահմանված չափանիշները և դասակարգման այլ պայմանները:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում ներդրումային ծառայություններ մատուցող անձինք ապահովում են սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված 0-րդ կետի 2-րդ ենթակետով նշված հայտարարության ստորագրությունը այն պրոֆեսիոնալ հաճախորդների կողմից, որոնք լևերիջով գործարքներ, այդ թվում՝ ֆորեքս գործարքներ կնքելու նպատակով պրոֆեսիոնալ հաճախորդ են դարձել մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 212-Ն

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 212-Ն որոշմամբ

«ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման Հավելվածի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ

Ես՝ _____,

անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անունը, ազգանունը, հայրանունը)

տեղյակ եմ, որ լևերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հաճախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան): Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող եմ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

_____

(ստորագրություն)

_____ _____ 20 թ.»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով զսպել ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների ռիսկայնությունը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3.1-ին հոդվածի 1-ին մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի ««Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը հաստատելու մասին» թիվ 205-Ն որոշմամբ հաստատված «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ կետերով.

«3. Սույն կանոնակարգում օգտագործվող «լևերիջով գործարք» և «ֆորեքս գործարք» հասկացությունները ունեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով կիրառվող նշանակությունը:

4. Սույն կանոնակարգում օգտագործվող «ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք» հասկացությունը նշանակում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով սահմանված ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք չհանդիսացող ցանկացած ածանցյալ ֆինանսական գործիք:»:

2) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր գլուխ 2-ով.

«ԳԼՈՒԽ 2. ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

5. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ բաժինը (ներառյալ՝ գրանցման և լիցենզավորման վերաբերյալ դրույթները), ինչպես նաև տվյալ բաժնի դրույթները կիրարկող «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի այլ կարգավորումները տարածվում են ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքների (ներառյալ՝ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների) և դրանց շուկայի վրա:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Այն կազմակերպությունները, որոնք մատուցում են ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքներով ներդրումային ծառայություններ, սույն որոշման ուժի մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում պարտավոր են դադարեցնել ներդրումային ընկերության լիցենզիա չունեցող իրավաբանական անձանց միջոցով այդպիսի ծառայությունների մատուցումը: Ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքներով ներդրումային ծառայությունների մատուցման համար համապատասխան անձինք դիմում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն ներդրումային ընկերություն (կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան որպես այլ ներդրումային ծառայություն մատուցող անձ) գրանցվելու և լիցենզիա ստանալու նպատակով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 213-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող անձանց մոտ առկա տեղեկատվական անվտանգության ապահովման մակարդակը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 181-րդ հոդվածի 1-ին մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) Որոշման 3-րդ պարբերությունը «111-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերից առաջ լրացնել «2-րդ հոդվածի 4-րդ մասը» բառերով,
2) Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2. Սահմանել, որ ՀՀ տարածքում գործող բանկերը, Կարգավորվող շուկայի օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան, վարկային բյուրոները և լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող անձինք իրենց տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը պետք է համապատասխանեցնեն տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների պահանջներին և ստանան համապատասխան ստանդարտների պահանջներին բավարարելու վերաբերյալ վկայագիր։»,
3) Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետը «զ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է» պարբերությամբ.

   «է) լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող անձինք։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
18 դեկտեմբերի 2018 թ., N 214-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (637), 08.01.2019):

*«Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները» կանոնակարգ 6/05-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 256-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգն ու մասնագիտական համապատասխանության չափանիշները,

հիմք ընդունելով «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները» Կանոնակարգ 6/05-ը՝ համաձայն Հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 6/05):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 14-ի «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանելու մասին» թիվ 256-Ն որոշումը□

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
27 դեկտեմբերի 2018 թ., N 221-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 24-ին (ՀՀՊՏ N2 (638), 15.01.2019):

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 221-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 6/05

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՍԿՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի (այսուհետ՝ հսկող) որակավորման կարգն ու մասնագիտական համապատասխանության չափանիշները, որակավորման վկայականի տրամադրման կարգն ու պայմանները□

2. Սույն կանոնակարգով սահմանված դիմումները և կից փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով□

3. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

4. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն «Փի-ԴԻ-էֆ» ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Դիմող ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի ընդլայնումը
օրինակ								
ԱԲԳ	_	դիմում	_	Որակ. վկ. տրամադրում	_	250918	.	pdf

5. Եթե հսկողն իրավաբանական անձ է, ապա սույն կանոնակարգով սահմանված որակավորման վկայականը տրվում է իրավաբանական անձի՝ սույն կանոնակարգի 2-րդ գլխով նախատեսված պահանջներից առնվազն մեկին բավարարող համապատասխան աշխատակցին□

ԳԼՈՒԽ 2
ՀՍԿՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Հսկողը պետք է բավարարի որակավորման հետևյալ պահանջներից առնվազն մեկին.
1) էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ,
2) Սի-Այ-էյ (CIA) որակավորման երկու մակարդակ,
3) Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակ,
4) Սի-Այ-էս-էյ (CISA) որակավորում:

ԳԼՈՒԽ 3
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԿՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Հսկողին որակավորման վկայական տրամադրելու համար ապահովված հիպոտեկային պարտատոմսեր թողարկողը (այսուհետ՝ թողարկող) Կենտրոնական բանկ է ներկայացնում՝
1) դիմում-տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,

2) սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված պահանջներից առնվազն մեկին բավարարելը հավաստող փաստաթղթեր□

8. Սույն կանոնակարգի հավելված 2-ով նախատեսված որակավորման վկայականը Կենտրոնական բանկն էլեկտրոնային եղանակով տրամադրում է սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց տասն աշխատանքային օրվա ընթացքում:

9. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին (փոստերին) չստանալու դեպքում թողարկողը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է՝ ուղարկելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

10. Կենտրոնական բանկը կարող է մերժել հսկողի որակավորման վկայականի տրամադրումը, եթե հսկողի որակավորման վկայական ստանալու համար դիմած անձը նախորդ երեք տարիների ընթացքում զրկվել է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված որևէ որակավորման վկայականից:

11. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է թողարկողին և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ դիմումի մերժման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 221-Ն որոշման Հավելվածի

ԴԻՄՈՒՄ - ՏԵՂԵԿԱՆՔ
ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀՍԿՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահի
_____ին

Հարգելի _____

Խնդրում եմ _____ տրամադրել
(հսկողի թեկնածուի անունը, ազգանունը)
որակավորման վկայական:

Ստորև ներկայացվում են հսկողի թեկնածուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի թողարկողի վերաբերյալ տվյալները
(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի հսկող դուք պետք է հանդիսանաք:

1. 1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը

1. 2. Ֆինանսական կազմակերպության տեսակը

- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն

2. Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի վերաբերյալ տվյալներ
Լրացվում է ֆիզիկական անձ հսկողի, իրավաբանական անձ հսկողի աշխատակցի համար

2.1. Անուն, ազգանուն, հայրանուն

2.2. Նշեք՝

- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- o Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

2.3. Նշեք՝

- o հանրային ծառայության համարանիշը
- o հանրային ծառայության համարանիշից հրաժարվելու տեղեկանքի համարը
- o կիրառելի չէ

2.4. Իրավաբանական անձ հսկողի համար նաև

- o իրավաբանական անձի գտնվելու/գործունեության վայրը
- o ՀՎՀՀ

3. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական, գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության

բ. հսկողը (իրավաբանական անձ հսկողի դեպքում՝ նաև իրավաբանական անձ հսկողի աշխատակիցը) թողարկողից անկախ է

գ. հսկողը համապատասխանում է ապահովված հիպոտեկային պարտատոմսերի հսկողի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի)

Թողարկողի կառավարման մարմնի իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 221-Ն որոշման Հավելվածի

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՍԿՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Ն

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
Անուն, ազգանուն *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում անձնագրի տվյալներ)*

ապահովված հիպոտեկային պարտատոմսերի հսկողի պաշտոնում աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ՝ _____

«___» _____20 թ.:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրն այլևս վկայականի տրման հիմք չէ:

*2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և 40-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2019 թվականի փետրվարի 12-ից շրջանառության մեջ դնել «Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը էսքիզների հետ միասին ներկայացված է սույն որոշման Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
27 դեկտեմբերի 2018 թ., N 226-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի դեկտեմբերի 24-ի
թիվ 226-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է հատված՝ Հ. Թումանյանի «Ախթամար» պոեմից բացված գրքի ֆոնին և դրվագ՝ պոեմի նկարազարդումից (գործ՝ Մ. Աբեղյանի): Ստորին կենտրոնական հատվածում անվանական արժեքի մակագրությունն է՝ «10000 ԴՐԱՄ»: Աջ և ձախ կողմերում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» ուղղահայաց մակագրությունն է և թողարկման տարեթիվը՝ «2019»:

Հուշադրամի դարձերեսին Հ. Թումանյանի դիմանկարն է և ստորագրությունը: Ձախ մասում գրողի ծննդյան և մահվան տարեթվերն են՝ «1869» և «1923»: Մակագրություններն են՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ» և «HOVHANNES TUMANYAN»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. դեկտեմբերի 24-ին (ՀՀՊՏ N 2(638), 15.01.2019):

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900^0
Տրամագիծը	22,0 մմ
Քաշը	8,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 41

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 44

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 49

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 50

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 60

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 81
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 91
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 93
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գործող ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ ապահովագրության դասերի
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 102
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2018 թ. նոյեմբեր	2018 թ. նոյեմբերի իրական աճի փոփոխությունը 2017 թ. նոյեմբերի նկատմամբ (%)	2018 թ. դեկտեմբեր	2018 թ. դեկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2017 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		3.7[1]		6.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	154647.7	1.1	174287.1	5.5
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	75654.8	-8.3	94389.1	-2.0
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	46991.7	0.2	86556.0	1.2
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	262851.8[1]	5.7[1]	359185.7	4.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	156512.9	17.5	181478.8	22.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	676.4	8.3	671.5	-18.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*[7]	205605[1]	5.2[2]	273058[3]	7.3[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2018 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.8 [1]	1.2	-3.5	2.9
Փետրվար	-0.5	-1.6	1.9	0.0
Մարտ	0.1	-1.7	-5.7	-0.1
Ապրիլ	-0.3	-1.2	0.4	-3.2
Մայիս	-1.0	-1.3	0.4	-14.7
Հունիս	-1.6	2.4	0.1	-3.8
Հուլիս	-1.2	-1.5	0.4	-22.9
Օգոստոս	0.6	-1.2	-0.2	-6.5
Սեպտեմբեր	0.3	0.2	-0.8	-15.1
Հոկտեմբեր	0.1	1.6	-0.1	0.3
Նոյեմբեր	1.0	1.6	0.8	1.9
Դեկտեմբեր	1.5	0.5	-0.3	3.2
2018 թ. հունվար – դեկտեմբերը 2017 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ	2.5	1.6	-2.2	13.1

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	2016	2017	2018
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.2	2.6	2.8[1]
Փետրվար	-1.4	-0.9	-0.5
Մարտ	-0.3	-0.3	0.1
Ապրիլ	-0.3	1.0	-0.3
Մայիս	-0.7	-0.2	-1.0
Հունիս	-0.5	-0.9	-1.6
Հուլիս	-2.3	-2.6	-1.2
Օգոստոս	-0.5	-0.4	0.6
Սեպտեմբեր	0.1	0.2	0.3
Հոկտեմբեր	0.5	0.8	0.1
Նոյեմբեր	1.0	2.0	1.0
Դեկտեմբեր	1.1	1.5	1.5
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.4	-0.6	2.9[1]
Փետրվար	-1.7	-0.2	3.3
Մարտ	-2.0	-0.1	3.7
Ապրիլ	-1.9	1.2	2.4
Մայիս	-2.1	1.6	1.6
Հունիս	-1.1	1.1	0.9
Հուլիս	-1.3	0.9	2.3
Օգոստոս	-1.9	0.9	3.3
Սեպտեմբեր	-1.9	1.0	3.5
Հոկտեմբեր	-0.9	1.2	2.8
Նոյեմբեր	-0.6	2.2	1.8
Դեկտեմբեր	-1.1	2.6	1.8

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[5]

Անվանում	2018 թ. դեկտեմբերը 2017 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**1.8**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	1.4	0.6
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	4.0	0.2
Հագուստ և կոշիկ	2.7	0.1
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.3	0.1
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	1.0	0.0
Առողջապահություն	3.8	0.3
Տրանսպորտ	6.1	0.5
Կապ	-0.6	0.0
Հանգիստ և մշակույթ	-2.6	0.0
Կրթություն	2.4	0.0
Ռեստորաններ և հյուրանոցներ	3.5	0.1
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.5	0.0

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2016	2017	2018
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.02[2]	-0.01[2]	0.30[2]
Փետրվար	-0.09	-0.04	0.23
Մարտ	-0.11	0.25	0.09
Ապրիլ	-0.11	0.38	-0.08
Մայիս	-0.18	0.22	-0.20
Հունիս	-0.39	-0.02	-0.34
Հուլիս	-0.27	-0.10	-0.34
Օգոստոս	-0.02	0.35	0.27
Սեպտեմբեր	0.11	0.39	0.77
Հոկտեմբեր	0.38	0.83	0.75
Նոյեմբեր	0.02	0.73	0.19
Դեկտեմբեր	-0.20	0.27	0.05
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-1.05[2]	-1.61[2]	4.33[2]
Փետրվար	-1.39	-1.24	4.57
Մարտ	-1.47	-0.86	4.30
Ապրիլ	-1.31	-0.30	3.74
Մայիս	-1.35	0.26	3.24
Հունիս	-1.45	0.68	2.84
Հուլիս	-1.23	0.89	2.52
Օգոստոս	-1.10	1.35	2.36
Սեպտեմբեր	-1.12	1.63	2.65
Հոկտեմբեր	-1.06	1.91	2.54
Նոյեմբեր	-0.92	2.78	1.84
Դեկտեմբեր	-0.97	3.31	1.53

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
2018 թ. դեկտեմբերը 2017 թ. դեկտեմբերի նկատմամբ, %	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**1.53**
Տավարի և հորթի միս	0.85
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	0.11
Հավի միս	0.08
Բուսական յուղ (արևածաղկի)	0.06
Բենզին	0.05
Վառելափայտ	0.05
Օդային տրանսպորտ	0.05
Հավի բուդ	0.05
Թառափ	0.05
Հնդկացորեն	-0.05
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	-0.05
Գազ (փոխադրամիջոցների լիցքավորման համար)	-0.07
Պանիր	-0.07
Շաքարավազ	-0.12
Հավի ձու	-0.12

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:*
[2] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:*
[3] *Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:*
[4] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:*
[5] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:*
[6] *Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:*
[7] *50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների միջին աշխատավարձի ցուցանիշը՝ ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	2018 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2018 թ. հունվար – նոյեմբերը 2017 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)	2018 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2018 թ. հունվար – դեկտեմբերը 2017 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	2202.3	109.8	2411.9	107.8
Ներմուծում *(ՍԻՖ)*	4521.3	124.2	4963.2	121.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2319.0	141.8	2551.3	137.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2017 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	120287	39610	80677	1064984	376109	688875
ԱՄՆ	23205	31726	-8521	183254	193606	-10352
Ուկրաինա	988	1540	-552	9102	13529	-4427
Ղազախստան	2028	217	1811	46839	2625	44214
Գերմանիա	3462	1922	1540	38568	28843	9725
Իսպանիա	988	1013	-25	9891	19387	-9496
Ֆրանսիա	2901	1597	1304	26291	15172	11119
ԱՄԷ	2635	2306	328	27105	21393	5712
Չինաստան	335	6530	-6195	4454	64710	-60257
Թուրքիա	221	1376	-1155	1446	10306	-8860
Այլ երկրներ	37906	27575	10331	344551	244121	100430
Ընդամենը	**194957**	**115414**	**79543**	**1756485**	**989801**	**766684**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2018 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	95341	38856	56485	1049984	471726	578258
ԱՄՆ	23498	22806	692	224132	190935	33197
Ուկրաինա	841	1126	-285	9619	14311	-4692
Ղազախստան	2300	278	2022	30639	3324	27315
Գերմանիա	3388	2392	996	41510	48803	-7293
Իսպանիա	900	1197	-297	11945	15333	-3388
Ֆրանսիա	4380	1213	3167	48756	14276	34479
ԱՄԷ	2493	1860	632	24742	23703	1039
Չինաստան	349	6102	-5753	4007	57465	-53458
Թուրքիա	185	1127	-942	2171	10850	-8680
Այլ երկրներ	40068	46262	-6194	338100	337668	431
Ընդամենը	**173744**	**123220**	**50524**	**1785604**	**1188396**	**597209**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2017 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	58119	19147	38973	513416	181498	331919
ԱՄՆ	11211	15358	-4147	88444	93557	-5113
Ուկրաինա	478	744	-267	4390	6527	-2136
Ղազախստան	980	105	875	22605	1268	21336
Գերմանիա	1675	928	747	18608	13913	4695
Իսպանիա	478	490	-12	4776	9349	-4573
Ֆրանսիա	1402	771	631	12692	7319	5373
ԱՄԷ	1274	1114	160	13059	10318	2740
Չինաստան	162	3154	-2992	2150	31203	-29053
Թուրքիա	107	665	-558	698	4971	-4274
Այլ երկրներ	18314	13332	4982	166298	117745	48552
Ընդամենը	**94198**	**55808**	**38391**	**847135**	**477669**	**369466**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2018 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	46191	18837	27355	507370	227902	279469
ԱՄՆ	11387	11052	335	108304	92235	16068
Ուկրաինա	408	546	-138	4645	6909	-2264
Ղազախստան	1115	135	980	14796	1605	13191
Գերմանիա	1642	1160	482	20052	23582	-3530
Իսպանիա	436	580	-144	5769	7403	-1635
Ֆրանսիա	2122	588	1534	23503	6894	16609
ԱՄԷ	1207	902	305	11953	11447	506
Չինաստան	169	2957	-2788	1936	27762	-25827
Թուրքիա	89	546	-457	1049	5245	-4196
Այլ երկրներ	19420	22407	-2987	163372	163104	268
Ընդամենը	**84187**	**59709**	**24478**	**862748**	**574089**	**288659**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2017	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.2	139.7	138.4	137.7	136.3	134.3	131.5	129.4	128.0	129.6	132.1	133.5
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	271.5	268.5	268.1	265.4	263.8	263.0	263.9	261.0	259.0	261.0	261.7	262.0
2018	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	134.8	132.4	132.2	133.7	134.7	133.8	133.5	137.5	137.3	135.8	136.4	140.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	257.5	255.3	255.9	260.6	266.6	270.3	273.4	281.5	283.4	282.0	281.1	282.0


[1] 2014 թ. մայիսին ամբողջ շարքը վերահայվել է, քանի որ փոփոխվել է գործընկեր երկրների սպառողական գների ինդեքսի բազիսային տարին՝ 2010=100 (նախկինում՝ 2005=100):
[2] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերահայման:
[4] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2017	2018											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ	Ն	Դ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**2314.1**	**2286.9**	**2279.2**	**2234.1**	**2039.3**	**2007.8**	**1992.1**	**2055.0**	**2069.6**	**2149.4**	**2082.9**	**2117.8**	**2249.3**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	7.2	1.9	0.6	0.6	9.2	7.0	5.5	4.5	3.0	1.6	1.6	6.9	6.0
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2306.9	2284.9	2278.6	2233.6	2030.1	2000.8	1986.6	2050.5	2066.6	2147.8	2081.3	2110.9	2243.4

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*
[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*
[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2017	2018											
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ	Ն	Դ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**730.7**	**744.6**	**739.8**	**743.1**	**737.8**	**724.4**	**696.2**	**703.7**	**706.0**	**705.2**	**692.9**	**695.6**	**674.4**
ԱՄՀ վարկ	294.2	301.0	299.4	300.3	298.6	291.2	273.3	273.4	272.4	271.4	267.9	267.2	248.4
ՀՓԻ տեղաբաշխում	125.5	128.3	127.8	128.1	127.3	124.5	123.8	123.8	123.5	123.6	121.9	121.8	122.2
Այլ վարկեր	309.1	314.0	311.9	313.7	311.0	307.9	298.3	305.8	309.4	309.2	302.3	305.8	302.8
Այլ պարտավորություններ	1.9	1.3	0.7	1.0	0.9	0.8	0.8	0.9	0.7	1.1	0.8	0.8	0.9

